

Կանտի համաձայն, մարդոց մօտ հրամայականները հիմնուած են *գործնական անհրաժեշտութիւններու* վրայ, որոնցմէ կը յառաջանան *պարտաւորութիւնները*: Կանտ կը զանազանէ երկու տեսակ գործնական անհրաժեշտութիւններ՝ պայմանականը եւ անպայմանականը, որոնցմէ կը յառաջանան երկու տեսակ պարտաւորութիւններ՝ պայմանականը եւ անպայմանականը: Այս զանազանութենէն կարելի է հետեւեցնել, որ կան նաեւ երկու տեսակ հրամայականներ՝ պայմանական կամ ենթադրական եւ անպայմանական կամ կատեգորիկ: Այս հրամայականները, որոնք գործնական բանական կանոններ են, նաեւ յիշուած են *Բարոյական դատողութիւն*⁽⁶⁰⁾ (Moral Judgement) հասկացութեան տակ:-

Ա. Ենթադրական հրամայականներ (Hypothetical Imperatives),

որոնք կրնան սկսիլ՝ *պէտք է, հարկ է* կամ *տրամաբանական է* արտայայտութեան ձեւերով եւ կը միտին՝ նպակադրումի անհրաժեշտութեան մը, խնդրոյ առարկայ անհատին առնչուած, ինչպէս մեր գնացքի օրինակը (տե՛ս *Բարոյական դատողութիւն* յօդուածը):- գնացքիդ հասնելու համար, *հարկ է, որ* հիմա ճամբայ ելլես...: Այս ենթախումբին պատկանող հրամայականները՝ յարաբերական բնոյթ կը կրեն. այլ խօսքով, եթէ հիմա ճամբայ չելլես, գնացքիդ չես հասնիր եւ անոնք ատակ չեն ընդհանրականացման, որովհետեւ առնչուած են միայն խնդրոյ առարկայ անհատին, մեր օրինակին մէջ անոր, որ գնացքին հասնիլ կ'ուզէ:

Նաեւ *հաստատական հրամայականները* (Assertorical Imperatives), յարաբերական բնոյթ կը կրեն եւ կը նկատուին ենթադրական հրամայականներ: Անոնք եւս կրնան սկսիլ՝ *պէտք է, հարկ է կամ լաւ է* արտայայտութեան ձեւերով կամ անոնց բացասական ձեւերով (օրինակ՝ *պէտք չէ, լաւ չէ*): Անոնք իրականութիւն մը կը հաստատեն եւ ընդհանրապէս կը միտին, օրինակ, անհատի քաջամոռջութեան, ինչպէս.- քեզի համար *լաւ է, որ* չծխես, այլ խօսքով, եթէ ծխես, կը վնասես քու առողջութեան: (Կանտ, իրականութիւն մը հաստատող ասոյթը կը զանազանէր՝ կարելիութենէն եւ անհրաժեշտութենէն:)

Բ. Անպայմանական հրամայականներ (Categorical Imperatives),

որոնք Կանտի համար կը ներկայանան որպէս բարոյական կանոններ կամ իր խօսքով՝ *բարոյական օրէնքներ*: Այս ենթախումբին պատկանող հրամայականները յարաբերական բնոյթ չեն կրեր. այլ խօսքով, անոնք չեն միտիր՝ անհատին առնչուած նպակադրումի անհրաժեշտութեան մը կամ անհատի օրինակ քաջամոռջութեան: Կանտի համաձայն, բարոյական կանոնները՝ բարոյական բացարձակ արժէքներ են եւ կարելի է Ա. Ենթախումբին նման կազմել հրամայականներու ենթախումբ մը, որ կրնայ սկսիլ

(60) **Բարոյական դատողութիւն** (Moral Judgement) հասկացութեան մասին, տե՛ս նաեւ Մաս – 9, Էջ 430: